



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/467/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

03 դեկտեմբերի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի դեկտեմբերի 3-ին քննելով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Կավալենկոյի Շահգալոյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2025 թվականի նոյեմբերի 10-ի թիվ ՎԻՎ/467/2025 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում հիմք ընդունելով «infocom.am» լրատվական կայքի՝ «Չարենցավանի համայնքապետարանը կառավարող խմբակցության հետ կնքել է 478 մլն դրամի պայմանագրեր» վերտառությամբ հրապարակման հիման վրա իրականացված ուսումնասիրության նյութերը և ղեկավարվելով Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի 1-ին մասերով,

իրականացրել է հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության հիման վրա վեր հանված Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանի կողմից դրսևորված առերևույթ խախտմանն առնչվող նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է.

1.2 Արմեփս (Armepps.am) գնումների համակարգի տվյալների ուսումնասիրությամբ պարզվել է, որ Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանը 2025 թվականի փետրվարի 5-ին և 2025 թվականի սեպտեմբերի 4-ին կնքել է համապատասխանաբար՝ **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1**, **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/16** և **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/17** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերը «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) հետ, որի գործադիր մարմնի ղեկավարը և Ընկերության միակ սեփականատերը հանդիսացել է իր հետ գործնական հարաբերություններ ունեցող անձ՝ նույն համայնքի ավագանու նույն խմբակցության անդամ Տարոն Եփրեմյանը:

1.3 Տարոն Եփրեմյանը պայմանագրերի կնքման ժամանակ գործնական հարաբերությունների մեջ է գտնվել «Աշկար» ՍՊԸ-ի հետ, քանի որ գործադիր մարմնի ղեկավարը և միակ սեփականատերն է հանդիսացել:

1.4 Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/16** և **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/17** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերը կնքելուց առաջ Հակոբ Շահգալոյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով են ներկայացվել դրանց կնքման փաստի վերաբերյալ հայտարարություններ:

1.5 2025 թվականի փետրվարի 5-ին կնքված **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը կնքելուց առաջ Հակոբ Շահգալոյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացվել դրա կնքման փաստի վերաբերյալ հայտարարություն՝ այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

1.6 Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 13-ի թիվ ՎԻՎ/467/2025 որոշմամբ Օրենսգրքի 169.31-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ խախտման հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

1.7 Հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 13-ին Հակոբ Շահգալոյանին հասցեագրել է թիվ 01/4391-2025 գրությունը՝ կից ներկայացնելով թիվ ՎԻՎ/467/2025 Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը, միաժամանակ հրավիրելով անձամբ կամ ներկայացուցչի միջոցով 2025 թվականի նոյեմբերի 27-ին ժամը՝ 11:00-ին մասնակցելու Օրենսգրքի 169.31-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ վարչական իրավախախտման հիմքով արձանագրության կազմմանը, ինչպես նաև 2025 թվականի դեկտեմբերի 3-ին ժամը՝ 15:00-ին վերաբերելի նյութերի հիման վրա իրականացվող գործի քննությանը, ինչի կապակցությամբ վարույթի մասնակիցը պատշաճ ծանուցվել է (հիմք՝ APC0130519575AM ծանուցագիր):

1.8 2025 թվականի նոյեմբերի 27-ին պատշաճ ծանուցված Հակոբ Շահգալոյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 496/25 արձանագրություն՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով՝ առ այն, որ Հակոբ Շահգալոյանի կողմից 2025 թվականի փետրվարի 5-ին N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1 կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը կնքելուց առաջ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացվել դրա կնքման փաստի վերաբերյալ հայտարարություն:

1.9 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Հակոբ Շահգալոյանի բացակայությամբ 2025 թվականի դեկտեմբերի 3-ին, ժամը՝ 15:00-ին տեղի է ունեցել Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/467/2025 գործի քննությունը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի ընթացքում Հակոբ Շահգալոյանի կողմից ներկայացվել է դիրքորոշում համաձայն որի՝

«... ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/1 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի մասին.

«ԱՇԿԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը «ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտը ներկայացրել է էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի՝ www.armeps.am կայքի միջոցով, որի

առաջարկած գինը եղել է նվազագույնը ի թիվս այլ մասնակիցների և գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է բավարար.

Սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահի, անդամների, քարտուղարի և Ընկերության հիմնադիրների, տնօրենի, որոշում կայացնող անձանց միջև բացակայել է մերձավոր ազգակցությամբ կամ խնամիրությամբ կապվածությունը.

Սույն ընթացակարգի մասով գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի կողմից ստորագրվել է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

Չնայած այն հանգամանքին, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի առկայության վերաբերյալ հայտարարություն չի ներկայացվել, հավաստիացնում եմ, որ իմ և համայնքապետարանի որևէ պաշտոնատար անձի, պատասխանատու ստորաբաժանման անդամների, գնահատող հանձնաժողովի անդամների, գնումները համակարգողի կողմից կատարվող գործողությունների արդյունքում չի ստեղծվել շահերի բախման այնպիսի իրավիճակ, որը կարող էր ազդել կամ ազդել է վերջիններիս պաշտոնական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:»:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/467/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Հակոբ Շահգալոյանը 2017 թվականից ստանձնել է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի պաշտոնը և համայնքի պաշտոնական կայքէջում առկա տեղեկության համաձայն՝ մինչ օրս զբաղեցնում է այդ պաշտոնը

(<https://charentsavan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=b0a9a17d-0f03-4180-b2be-c45d3461e061/>):

3.2 ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի պաշտոնական կայքէջում առկա տեղեկության համաձայն՝ Տարոն Եփրեմյանը հանդիսանում է Չարենցավան համայնքի ավագանու անդամ:

(<https://charentsavan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=b0a9a17d-0f03-4180-b2be-c45d3461e061/>):

3.3 Արմեփս (Armeps.am) գնումների համակարգի տվյալների համաձայն՝ Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանը 2025 թվականի փետրվարի 5-ին կնքել է **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը, իսկ 2025 թվականի սեպտեմբերի 4-ին՝ **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/16** և **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/17** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերը «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի հետ:

3.4 Հակոբ Շահգալոյանը 2025 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված **N ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/16** և **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/17** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերի վերաբերյալ հանդես է եկել շահերի բախման իրավիճակի առկայության մասին հայտարարությամբ:

3.5 2025 թվականի փետրվարի 5-ին կնքված **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը կնքելուց առաջ Հակոբ Շահգալոյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացվել դրա կնքման փաստի վերաբերյալ հայտարարություն:

3.6 2025 թվականի փետրվարի 5-ին կնքված **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի գինը փոփոխությունների արդյունքում կազմել է 433,563,890 (չորս հարյուր երեսուներեք միլիոն հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր իննսուն) ՀՀ դրամ, իսկ 2025 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված **N ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/16** և **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/17** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերինը՝ համապատասխանաբար 31,458,000 (երեսունմեկ միլիոն չորս հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ և 32,541,000 (երեսուներկու միլիոն հինգ հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ: Նշված պայմանագրերը Հակոբ Շահգալոյանը՝ որպես պատվիրատուի ղեկավար, կնքել է «Աշկար» ՍՊԸ-ի հետ, որի գործադիր մարմնի ղեկավարը և միակ սեփականատերը հանդիսացել է իր հետ գործնական հարաբերություններ ունեցող անձ՝ նույն համայնքի ավագանու նույն խմբակցության անդամ Տարոն Եփրեմյանը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների

վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա:

4.2 Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային:

4.3 Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման համաձայն՝ համայնքի ղեկավարի պաշտոնը հանդիսանում է **համայնքային քաղաքական պաշտոն**:

4.4 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

4.5 Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ:

4.6 Նույն հոդվածի 11-րդ մասը կարգավորում է փոխկապակցված անձանց շրջանակը, որի 2-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական և ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձինք (...):

4.7 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց** կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

4.8 Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը

(անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, **ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում** իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հայտարարություն **շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին**, որը ենթակա է քննարկման անհապաղ:

4.9 Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

4.10 Նույն հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը կամ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունը ստանալն անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց** կամ որոշում կայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

4.11 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված է գնումների գործընթացի կազմակերպման կարգը (**այսուհետ՝ Կարգ**), որի 4-րդ կետով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում, 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը), 3) **պայմանագրի կնքում**, 4) պայմանագրի կատարում և կառավարում, Կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ պատվիրատուի ղեկավարը՝ **տեղական**

ինքնակառավարման մարմիններում՝ համայնքի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է, Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ պատվիրատուի ղեկավարը, ի թիվս այլ գործառույթների, կնքում է պայմանագիրը:

4.12 «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և **շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը:**

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.15 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.16 Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների

համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.17 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.18 Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելը՝** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4.19 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

«Հանրային ծառայության մասին» օրենքով կարգավորվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից նույն օրենքով սահմանված դեպքերում շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն ներկայացնելուն առնչվող իրավահարաբերությունները:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է «շահերի բախման իրավիճակի» հասկացությունը, որի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթով բացահայտված է «Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը» բովանդակային սահմանները:

Վերոնշյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Օրենքով սահմանված իմպերատիվ պահանջներն ապահովում են պաշտոնատար անձի մասնավոր շահի ինչպես հնարավոր, այնպես էլ փաստացի ազդեցության չեզոքացումը վերջինիս պաշտոնական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, որը կարող է դրսևորվել ինչպես որոշում կայացնելու, այնպես էլ գործողություն կատարելու արարքներում:

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորումների վերլուծությունից բխում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին հայտարարություն ներկայացնելու պարագայում անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց՝ բացառություն սահմանելով միայն այն դեպքերի համար, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ:

Վերլուծելով Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումները՝ պարզ է դառնում, որ նշված իրավակարգավորմամբ նախատեսվում է շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու պարտականություն, որը չկատարելու համար վարչական պատասխանատվություն է նախատեսված Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով: Նշված դրույթով սահմանված զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է իրավասու մարմին հայտարարություն չներկայացնելու արարքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ մասնավոր շահի առկայությունն արդեն իսկ այն ազդակն է, որի պարագայում պաշտոնատար անձը, ում վերաբերելի են շահերի բախմանն առնչվող իրավակարգավորումները, մինչև որոշում ընդունելը կամ գործողություն կատարելը պարտավոր է շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողովին գրավոր հայտարարություն ներկայացնել:

Սույն գործով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանն Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, ուստի,

վերջինիս նկատմամբ տարածվում են Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված շահերի բախմանը վերաբերող իրավակարգավորումները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ **վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:**

Տվյալ դեպքում Հանձնաժողովը փաստում է, որ Հակոբ Շահգալոյանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 4-ին «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի հետ կնքված N ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/16 և ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/17 կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերի շրջանակում հանդես է եկել շահերի բախման իրավիճակի առկայության մասին հայտարարությամբ, ուստի N ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/16 և ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/17 պայմանագրերի կնքման մասով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման՝ Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

Ինչ վերաբերում է Հակոբ Շահգալոյանի՝ որպես պատվիրատուի ղեկավարի կողմից (ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար) 2025 թվականի փետրվարի 5-ին կնքված **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** պայմանագրին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում առկա է Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պահանջի խախտում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդ պայմանագիրը կնքվել է «Աշկար» ՍՊԸ-ի հետ, որի միակ սեփականատերը հանդիսացել է Տարոն Եփրեմյանը, ով նույն՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ է, միևնույն ժամանակ, Տարոն Եփրեմյանը և Հակոբ Շահգալոյանը հանդիսանում են նույն խմբակցության անդամներ: Այդ փաստով պայմանավորված՝ Հանձնաժողովը գտնում է, որ Հակոբ Շահգալոյանի և Տարոն Եփրեմյանի միջև առկա են գործնական հարաբերություններ, հետևաբար՝ Հակոբ Շահգալոյանը պարտավոր էր շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, ինչը չի կատարվել:

Հանձնաժողովը, անդրադառնալով Հակոբ Շահգալոյանի կողմից ներկայացված պարզաբանմանն առ այն, որ իր և համայնքապետարանի որևէ պաշտոնատար անձի, պատասխանատու ստորաբաժանման անդամների, գնահատող հանձնաժողովի անդամների, գնումները համակարգողի կողմից կատարվող գործողությունների արդյունքում չի ստեղծվել շահերի բախման այնպիսի իրավիճակ, որը կարող էր ազդել կամ ազդել է վերջիններիս պաշտոնական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Հանձնաժողովն արձանագրում է, որ Հակոբ Շահգալոյանը, 2025 թվականի փետրվարի 5-ին **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի շրջանակում, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, պարտավոր էր գործել «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ, մասնավորապես, պարտավոր էր ղեկավարվել Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կարգավորումներով:

Բացի այդ, Հանձնաժողովն էական է համարում նաև այն հանգամանքը, որ Հակոբ Շահգալոյանը 2025 թվականի ընթացքում «Աշկար» ՍՊԸ-ի հետ կնքված երեք պայմանագրերից երկուսի՝ 2025 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված **N ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/16** և **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/17** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերի շրջանակում շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն է ներկայացել Հանձնաժողով, ինչն ինքնին վկայում է այն մասին, որ Հակոբ Շահգալոյանը գտել է, որ իր կողմից «Աշկար» ՍՊԸ-ի հետ, որի միակ սեփականատերը հանդիսացել է իր հետ գործնական հարաբերություններ ունեցող անձ՝ նույն համայնքի ավագանու նույն խմբակցության անդամ Տարոն Եփրեմյանը, կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերի կնքումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման: Հետևաբար, վերջինիս կողմից ներկայացված պարզաբանումն առ այն, որ 2025 թվականի փետրվարի 5-ին **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** պայմանագրի կնքմամբ իր և համայնքապետարանի որևէ պաշտոնատար անձի, պատասխանատու ստորաբաժանման անդամների, գնահատող հանձնաժողովի անդամների, գնումները համակարգողի կողմից կատարվող գործողությունների արդյունքում չի ստեղծվել շահերի բախման այնպիսի իրավիճակ, որը կարող էր ազդել կամ ազդել է վերջիններիս պաշտոնական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, անհիմն է: Ուստի, Հակոբ

Շահագալղյանը մինչև 2025 թվականի փետրվարի 5-ին **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** պայմանագրի կնքումը ևս պարտավոր էր Հանձնաժողով ներկայացնել շահերի բախման իրավիճակի առկայության մասին հայտարարություն, քանի որ վերոնշյալ պայմանագիրը կնքվել է նույն «Աշկար» ՍՊԸ-ի հետ, որի գործադիր մարմնի ղեկավարը և միակ սեփականատերը հանդիսացել է իր հետ գործնական հարաբերություններ ունեցող անձ՝ նույն համայնքի ավագանու նույն խմբակցության անդամ Տարոն Եփրեմյանը:

Այսպիսով, սույն գործով առկա փաստերի համադրման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ Հակոբ Շահագալղյանի կողմից իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումն ապահովելու նպատակով չեն ձեռնարկվել օրենքով սահմանված համապատասխան գործողություններ շահերի բախման իրավիճակում չհայտնվելու կամ նման իրավիճակում հայտնվելու պարագայում օրենքով նախատեսված՝ կանխարգելման ընթացակարգերով առաջնորդվելու ուղղությամբ:

Վերոշարադրյալի արդյունքում, սույն գործով վարույթի մասնակցի կողմից խախտվել է Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու առնչությամբ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը:

Հանձնաժողովը, անդրադառնալով վերոնշյալ իրավախախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցին, գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովը էական է համարում նաև այն հանգամանքը, որ 2025 թվականի փետրվարի 5-ին կնքված **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի գինը փոփոխությունների արդյունքում կազմել է 433,563,890 (չորս հարյուր երեսուններեք միլիոն հարյուր վաթսուներեք հազար ութ

հարյուր հինսուն) ՀՀ դրամ ու այդ պայմանագրի մասով Օրենքով սահմանված կարգով հայտարարություն Հակոբ Շահգալոյանի կողմից չի ներկայացվել Հանձնաժողով, այնինչ՝ 2025 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված **N ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/16** և **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/17** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերինը՝ համապատասխանաբար 31,458,000 (երեսունմեկ միլիոն չորս հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ և 32,541,000 (երեսուներկու միլիոն հինգ հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ, որոնց մասով արդեն Օրենքով սահմանված կարգով հայտարարությունը ներկայացվել է Հանձնաժողով:

Այսպիսով պարզ է դառնում, որ Հակոբ Շահգալոյանի համար պարզ և ենթադրելի է եղել, որ «Աշկար» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, սակայն վերջինս Օրենքով սահմանված հայտարարությամբ հանդես է եկել միայն էականորեն ավելի ցածր գնով պայմանագրերի՝ 2025 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված **N ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/16** և **ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/17** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերի դեպքում, այնինչ՝ 2025 թվականի փետրվարի 5-ին կնքված **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի դեպքում վերջինս նման հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով, չնայած այն հանգամանքին, որ պայմանագիրը կնքվել է նույն հանգամանքների պարագայում, սակայն էականորեն ավելի բարձր գնով: Այդպիսով կարող ենք եզրահանգել, որ քննարկվող խախտումն իր էությամբ ավելի ռիսկային է օրենքով պաշտպանվող շահերի տեսանկյունից:

Վերոշարադրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Հակոբ Շահգալոյանի կողմից կատարված արարքը հանգեցնում է օրենքով պահպանվող շահերի՝ սույն դեպքում «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրված՝ շահերի բախմանը վերաբերելի իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը՝ հաշվի առնելով այն, որ գնման պայմանագրի կնքմամբ, պաշտոնատար անձը մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունն ստանալը, ըստ էության, ձեռնպահ չի մնացել գործողություն կատարելուց: Միաժամանակ, առկա չեն եղել նաև այն դեպքերը, երբ անհապաղ գործողություն կատարելը պայմանավորված է եղել անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ:

Այսպիսով, ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանն իր լիազորությունների շրջանակում 2025 թվականի փետրվարի 5-ին **N ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** պայմանագրի կնքմամբ կատարել է գործողություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում շահերի առկայության մասին գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ խախտելով օրենքով սահմանված շահերի բախմանը վերաբերելի իրավակարգավորումների պահանջը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, 247-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Կավալենկոյի Շահգալոյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ **300,000** (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «**նպատակ**» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հակոբ Կավալենկոյի Շահգալոյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՅԱՆ